

891.318

7-97

Կ.Ս.ՊՈՒԾԿԻՆ



ՔՆԱԾ ԴՆԻՌՈՒՀԻՆ
ՅԵԿ
ՅՈՐ ՔԱՅԵՐԸ

891.715.
Դ - 97

Պետքանի 1937 Յերևան

30 MAY 2011

ՊՈՒՏՆԱՆ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ

891.718

Պ-97

Ա. Ա. ՊՈԽՃԻՆ

ՔՆԱԾ ԴՇԽՈՒՀՀԻՆ
ՅԵՎ
ՅՈԹ ՔԱԶԵՐԸ

Թարգմ. Ա.Թ. ԽՆԿՈՅՑ.Ն
Նկարները՝ Ս. ԱԼԹՈՒՆՅԱՆԻ

ՊԵՏԱՐԱՏ
ՀԱԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1937

Խմբագիր՝ Ծ. Զ. Ա. Ր. Յ. Ա. 6
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռ. Ա. Յ. Ա. 6
Մրգարիներ՝ Հ. Գոլովանյան յեվ Հ. Մանուկյան
Գլամիկի լիազոր Կ-4528 Հռոմ. 4002
Պատվեր 285, Տիրամ 3000
Պետրասի սպառան, Յերեման, Ա. Կեռևյանցի, 4




102 94
37

Մնաս բարով ասելով
թագավորը թագուհուն՝
Գնաց. չեկավ մի տարով:
Թագուհին եր, որն ի բուն,
Առավոտից իրիկուն,
Առագաստում կենտ նստած՝
Լուսամուտին աչքն հառած՝
Բաղասում եր, սպասում
Յեվ աչքերը վընասում:
Աչքերն ենքան նայեցին,
Վոր նայելուց ցավեցին:
Չըկա, չըկա հոգյակը,
Սիրոն ե ալրում փափազը:
Միայն բուքն ե խիստ հուզվում,
Զլունն ե գալիս ու դիզվում.
Ինն ամիսն ե հա անցնում,
Առագաստում թագուհին
Զրորնեքի սուրբ տոնին
Պատկում բերում մի աղջիկ,
Ինչպես վարդի մի փնջիկ:
Առավոտուն, լուս ու մութ,
Արքան լեկավ, ի՞նչ ողուտ.
Վրան նայեց թագուհին,
Ծանր-ծանր հառաչեց
Ու հուզմունքից խստագին
Ճաշին ընդիշտ նա ննջեց:

Արքան մընաց սպավոր.
 Նա ել մարդ եր մեղավոր.
 Տարին անցավ վոնց յերազ
 Նա կին առավ դեռահաս.
 Բարձր, սիրուն, նազելի,
 Բայց բնուէթը զըզվելի,
 Զար ու հպարտ, կըտըրտան.
 Կասկածոտ ու մըրթմըրթան:
 Ոժիտ ուներ լի ու լի,
 Հետն ել մի հատ հայելի,
 Պետք ե ասեմ ավելին,
 Խոսել գիտեր հայելին.
 Հետը ուրախ խոսում եր
 Ու զուգվելով ասում եր.
 — Ասա դու ինձ, հայելի,
 Ո՞վ կա ինձնից ավելի
 Արմաղ-շարմաղ, սիրելի:
 Հայելին իսկույն և եթ
 Խոսում եր թագուհու հետ.
 «Զկա քեզնից ավելի
 Արմաղ-շարմաղ, սիրելի»
 Ու թագուհին հըսնոում,
 Զուլու ուսերը ծըռմոում,
 Քթի տակը մըռմոում,
 Աչքերը ճը՝ տ-ճտտացնում,
 Մատներով չը՝ տ-չտտացնում,
 Չեռքը մեջքին կանթ արած՝
 Կանգնում հայելու դիմաց:

 Արքաղնուհի աղջիկը,
 Հոտով վարդի փնջիկը,
 Հետղետե ծաղկելով՝
 Մեծանում եր որերով:



Աչք ու ունքը սև սաթե եր,
 Լուսը դեմքից կը կաթեր.
 Դարձավ սիրունի փեսեն
 Իշխանազուն Յեղիսեն.
 Հոր մոտ զրկեց նա պատգամ.
 Արքան ասավ. «Հա կը տամ—
 Յոթը քաղաք, շատ դուակ—
 Տվեց ոժիտի տեղակ:
 Թագուհին առագաստում
 Իրան զուգում, պատրաստում
 Ու հայելուն նա ելի.
 — Ասա դու ինձ, հայելի,
 Ո՞վ ե ինձնից ավելի
 Արմաղ-շարմաղ, սիրելի:
 Հայելին թե, թագուհի,
 Լսիր, քեզնից ավելի
 Խորթ աղջիկդ ե սիրելի:
 Թագուհին ե վեր թոչում,
 Խփում նրան ու ճշում.
 — Ա՛յ դու անպետք ապակի,
 Քո սրտիկը թող ճաքի.
 Դու ուղիղը չես ասում.
 Վրդովել ես ինձ ուզում:
 Ա՛յ թե ինչպես աճեց նա.
 Հարկե, սպիտակ կերես.
 Հղի մալրը մեն-մենակ
 Լուսամուտից շարունակ
 Զյունին ենքան ե նայել,
 Վոր աղջիկն ե սպիտակել.
 Բայց ինձ ասա դու ելի,
 Իմ աննման հայելի.
 Միթե յես չեմ դշխունը,

Աշխարհի մեջ նշխունը:
 Պատասխանեց հայելին.
 «Խորթ աղջիկդ ե սիրելին»:
 Վոնց թե կծած սև ոճից,
 Զար թագուհին նախանձից
 Են հայելուն մի բըթեց,
 Բոնեց մի կողմ շպրտեց.
 Ճշաց, կանչեց նաժիշտին,
 Կանչեց բերեց իր կշին.
 Ասավ. «աղջի, քեզ հետ եմ,
 Թե չե մազդ կը փետեմ.
 Խորթ աղջկաս հետդ առ,
 Խսկուն և եթ տար անտառ.
 Կապիր նրան ծառերին,
 Բաժին դառնա գալերին»:
 Աստված պահի կնոջ հերսից,
 Սատանան եր խոսում ներսից.
 Հետը վիճել չեր կարելի,
 Մի կը ակ եր անմարելի:
 Նաժիշտն առավ վարդ դշխունը,
 Տարավ անտառ, անպես հեռուն,
 Վոր աղջիկը ընկավ գլխի,
 Արցունք թափեց աղի-լեղի
 Ու աղաչեց. «Հույսը, լույսը.
 Ի՞նչ եմ արել անմեղ կույսը.
 Դու ինձ խղճա, ինձ խնալի,
 Յերբ վոր դառնամ լես թագուհի,
 Կը կատարեմ քո բաղձանքը».
 Նա ել լսեց աղաչանքը,
 Վոչ սպանեց և վոչ կապեց,
 Տեղը թողեց տուն ըշտապեց:

— Ի՞նչ, հարցրեց չար թագուհին,
 Վո՞րտեղ մնաց քո դշխուհին:
 — «Խոր անտառում, ասեմ ճիշտը,
 Պատասխանեց սև նաժիշտը.
 Յես կապեցի զույդ արմունկից,
 Ել չի պրծնի գալի ճանկից.
 Լամբ ել են ե չըտանջըվի,
 Խոր անտառում թող ջընջըվի»:
 Լուրը հասավ վողջ աշխարհին,
 Թե կորել ե արքազնուհին:
 Թագավորը մնաց լալեն,
 Լալեն, լալեն, մղկտալեն.
 Ու պատանի անբախտ փեսեն,
 Իշխանազուն են Յեղիսեն,
 Սիլող սիրտը հա տանջելով,
 Ով տեր աստված հա կանչելով
 Գնաց գտնի նշանածին:
 Հիմի գնանք մենք կորածին.
 Մաղիկ, մաղիկ մղկտալեն,
 Ես կողմ, են կողմ վեր, վար տալեն,
 Մութ անտառը տվեց անցավ,
 Մի դղյակի նա մոտեցավ.
 Շունն հաջելով վրա վազեց,
 Մոտը դալով վոտը լիզեց.
 Թափառական հլուրը չքնաղ
 Մրահ մտավ լուռ ու խաղաղ.
 Պատշգամբը լելավ վախով,
 Դուռը բացեց լերկաթ ախով.
 Մտավ սենյակ և վոչ մի շունչ,
 Զորս պատերը կանգնած են մունջ.
 Բայց տախտերին խալ—խալիչա
 Յեվ հատակին նախշուն քեչա.

Մի անկյունում փայտե սեղան,
 Մի անկյունում մեծ վառարան.
 Տեսավ կույսը դատարկ տեղ չի,
 Բարի մարդկանց մոտ չի կորչի.
 Ու սենյակից գես-դեն մտավ,
 Յաք ու ցրիվ ինչ վոր դտավ,
 Մրբեց, մաքրեց ու վեր քաղեց,
 Ըսկած բանը տեղից կախեց,
 Ու սենյակի դուռը տիեց.
 Մրբի առաջ վառեց կանթեղ,
 Գնաց մտավ մի ծածուկ տեղ:
 Ճաշի ժամին, մին ել ահա,
 Բակը լցվան յոթն աժդահա,
 Յոթով մտան սենյակը այն.
 Մեծը ասավ. «Ես ինչ նոր բան.
 Ամեն ինչը արգի-կարգի.
 Ո՞վ ե բերել տունը սարքի?
 Ո՞վ ես, ով չես, առաջ արի.
 Տեսնենք չար ես դու թե բարի.
 Թե ոի մարդ ես դու ալեոր —
 Մեր բիձեն ես դու պատվավոր.
 Թե պատանի — ջիվան-ջանել —
 Մեր ախպերն ես ախպոր վայել.
 Թե ծեր կին ես-մալը լեղիր մեղ,
 Մեզ ել վորդի արա դու քեզ.
 Թե աղջիկ ես հուրիկ-բուրիկ —
 Յեղիր դու մեղ անուշ քուրիկ»:
 Յեվ դշխուհին յերեաց,
 Մինչև գոտին խոնարհվեց,
 Տան տերերին բարեեց.
 Վարդի նըման կարմըրեց.



Ներողություն նա խնդրեց,
 Վոր անկոչ ու անծանոթ
 Հուռը ե յեկել իրանց մոտ
 Իսկուն խոսքից իմացան —
 Դշխուհի լե աղջիկն այն.
 Գորդի վրա նստացրին
 Գաթա, գինի հրամցրին.
 Թողեց գինին գավաթով
 Ու գաթիցը, ամոթով,
 Կտրեց կերավ մի պատառ.
 Հանգստանալու համար
 Յոթն ախպորից հուրընկալ
 Խնդրեց նա մի մահճակալ:
 Յոթն ախպորով միասին
 Սենյակ տարան հուր կուտին.
 Թողին նրան մեն-մենակ
 Քնի իրանց թևի տակ:

Որերն անցնում են կամաց,
 Բայց դշխուհին նշանած
 Յոթն ախպորանց դղյակում
 Համ ծլում ե, համ ծաղկում,
 Յեղբայրները խմբովի
 Լուսաբացին՝ մի քովի
 Գնում են միշտ ման գալու,
 Վայրի բաղեր զարկելու,
 Կամ թե թուրք-մուրք փնտրելու
 Յեվ գլուխը կտրելու.
 Հալածելու միասին
 Պյատիգորսկի չերքեղին:
 Յեվ դղյակի տիրուհին
 Իսքն ե վոր կա դշխուհին.
 Վառում, լեփում, պատրաստում+

Յոթի հետ սեղան նստում
 Ու հակառակ չի խոսում,
 Զան ե ասում, զան լսում,
 Որեն եղան են հոսում,
 Հեղաթն եսպես ե ասում:
 Յոթն ախպորով վարդ կուտին
 Սիրեցին. բարելուսին
 Սենյակ մտան միասին.
 Մեծը ասավ. վարդի բուլը,
 Անվանել ենք մենք քեզ քուլը.
 Բայց սիրել ենք քեզ յոթով,
 Մեզ մի անի ամոթով,
 Դու մի թուլ տա, վոր կովենք,
 Պատճառ դառնաս, մենք ցրվենք:
 Յեղիր մեզնից մեկիս կին,
 Մյուսներիս քուլը անդին.
 Գլուխդ ի՞նչ ես դու շարժում,
 Միթե ինձ ես դու մերժում,
 Ըստրի, վորս ե քեզ արժան:
 — Ո՛, դուք քաջեր պատվարժան,
 Իմ յեղայրներ սիրասուն.
 Ճիշտն եմ, ճիշտը ձեզ ասում.
 Աստված պատժի թե ստեմ,
 Տեղիս մեջ վողջ շընստեմ,
 Յես աղջիկ եմ հարսնացու,
 Ունիս յես ինձ փեսացու:
 Դուք շատ քաջ եք ու խելոք,
 Ձեզ սիրում եմ յես ջոկ-ջոկ,
 Յեղայրներս եք հարազատ.
 Թողեք խոսեմ յես ազատ.
 Նշանածս ե, ձեզ ասեմ,
 Իշխանազուն Յեղիսեն:

Յեղայրները խորհեցին,
 Ծոծրակները քորեցին.
 — Վոր եղան ե, մեզ ներիր,
 Քրոջ նման մեզ սիրիր.
 Յես այդ մասին, ասեմ ճիշտ,
 Ել չեմ խոսի չեմ, ընդ միշտ, —
 Գլուխ տալով մեծն ասավ.
 Կույսը տեղի մեջ խոսավ.
 «Հա. չես ուզում, ախպեր զան,
 Քուլը լինի դավաճան»:

Յոթն ախպերը փեսացու
 Թողին աղջիկն հարսնացու.
 Սուսիկ, վուսիկ գնացին
 Յեզ խոսքի տեր մնացին:
 Բայց նենգամիտ թագուհին
 Զեր մոռացել ցավը հին.
 Նա չեր ներում դշիուհուն,
 Վոնց իրանից նա սիրուն:
 Բայց թե են ե ցավալին,
 Գնաց գտավ հայելին.
 Դրավ առջեն ու նստեց.
 Իրան զուգեց, պատրաստեց.
 Ժպտաց, ասավ. «հայելի,
 Ասա, ասա ինձ ելի,
 Ո՞վ ե ինձնից ավելի
 Արմաղ-շարմաղ, սիրելի»:

— Գեղեցիկ ես, խոսք չկա,
 Բայց անտառում մինը կա,
 Յոթ ախպրանց դղակում
 Անհայտ ծլում ու ծաղկում,
 Նա յե քեզնից ավելի

Արմաղ-շարժաղ, սիրելի:
 Ու թագուհին վեր թռավ,
 իր նաժիշտին ձեռք առավ.
 «Վստահացմար ինձ խաբել,
 Խորթ աղջրկաս չըկապել»:
 Նա ել պատմեց լեղածը.
 Թագուհին թե՝ «չեղածը
 Քո գլուխը կըբերեմ.
 Քանի վողջ ե դշխուհին,
 Վայը կըտամ քո որին»:

Մատաղ կուսը մի ջերմ որ,
 Հսպասելով լոթն ախպոր,
 Պատուհանում մանում եր.
 Են ինչ դռան մեծ շունն եր,
 Սաստիկ հաջեց ու կուսը,
 Տեսավ՝ ուզվորը դուրսը,
 Պաշտպանվելով շընիցը,
 Ներս ե մտնում դըռնիցը:
 — Այ շուն, հանդիսա, ինչ ե, ինչ.
 Սպասիր դու, տատի, քիչ.
 Կը լոեցնեմ իես գժին
 Ու կըբերեմ քեզ բաժին,
 Գոչեց վերից են կուսը:
 — Իմ զավակս, իմ լուսը,
 Շունդ ինչքան կատաղած ե,
 Աղքատ կուզե, վոր կըծե.
 Յեկ ինձ մոտ. — Կուսն ուզում ե
 Հաց բերի. շունն հուզվում ե.
 Պատշպամբին կպչելով,
 Վոտներն ընկած հաջելով,
 Թուլլ չի տալիս աղջկան
 Մոտենալու են կնկան.

1294
37



Հենց պառավը դեպ նրան,
 Հարձակվում ե հա վրան
 Ինչպես կատղած, գազազած.
 — Ես ի՞նչ հրաշք, կույսն ասաց,
 Ես որ շունը ի՞նչ վաստ ե,
 Կարելի լե քնատ ե:
 Բերեց հացը ցած նետեց,
 Շանը մի կերպ խաբտեց.
 Պառավն առավ ու ասաց.
 «Աղջիկ, որնի քեզ աստված,
 Շունը վերև չի թողնի,
 Ես խնձորը դու բռնի».
 Ու մի խնձոր մեղրածոր,
 Վուկեղոծած, կարմրավուն,
 Վեր ե գցում դշխուհուն:
 Շունը վերեն ե զլում,
 Կույսը խնձորն ե խլում:
 «Շան հաջոցը քեզ ի՞նչ փուլթ,
 Աղամիլակս, անձանձրուլթ,
 Եդ խնձորը կարմրախետ
 Անուշ կանես ճաշից լետ».
 Պառավն ասաց, հեռացավ,
 Շունը նորից չարացավ,
 Նա վազում ե, վազվզում,
 Կոնծկոնծում ե, մըզմըզում.
 Մին չոքում ե, մին պառկում
 Յեվ սրտիցը խոր տնքում.
 Ասել կուզե դշխուհուն
 «Դեն շպրտիր»: — Ալ իմ շուն,
 Եսոր քեզ ի՞նչ պատահեց,
 Ասավ շանը ու շոյեց:
 Հետո մտավ սենյակը,

Դրեց, փակեց դռնակը
 Ու սկսեց նա բանել,
 Պատուհանում կազ մանել,
 Ազընշումից թել հանել
 Ախալքանց ճանքեն հա պահել,
 Ալ խնձորին ծուռ նայել.
 Խնձոր, խնձոր, ի՞նչ խնձոր,
 Կտոտ, հյութոտ, մեղրածոր,
 Հոտոտ-մոտոտ թարմ ու նոր,
 Կարմրաթուշիկ, վոսկեհատ,
 Կուտ ու կորիզ նուան հատ
 Յերկում են կեղեկց:
 Նոր ե քաղած տերեկց:
 Կույսը ելավ սրտամաշ,
 Զըհամբերեց մինչև ճաշ.
 Խնձորն առավ նա ձեռքին.
 Մոտեցրեց շրթունքին.
 Մի քիչ կծեց ատամով
 Ու կուլ տվեց խիստ համով.
 Մին ել հանկարծ իմ կույսը՝
 Իմ հողակը, իմ լույսը,
 Անձեն, անձուն, անբարբառ
 Փովեց տեղը շնչառապառ:
 Դալար կոներ թափվեցան,
 Պայծառ աչքեր փակվեցան,
 Վոսկի խնձոր գլորավ,
 Նախշուն հասակ ձլորավ.
 Ընկավ կույսը նշանած,
 Վոչ կենդանի, վոչ մեռած:
 Յեղբայրները անտեղլակ
 Գալիս ելին դեպ դղրակ
 Որվա հաջող թալանից.

Մին ել շունը տան կողմից
 Վրա պրծավ հաջելով.
 Ու նորից տուն փախչելով
 Կուզեր ասել՝ շուտ հասեք.
 Ել մի, ել մի սպասեք.
 Են քաջերը վատ նշան
 Հաշվելով հաջոցը շան,
 Սլացան, սենյակ լցվան,
 «Այս, վախ»: Շունը բարձրաձայն
 Վրա պրծավ, չարացավ,
 Խնձորը կերավ չորացավ.
 Ել հետ չըդա եդ որը,
 Թունավոր եր խնձորը:
 Յոթ աղբերը ամենքով,
 Հոգու սաստիկ հուզմունքով,
 Քրոջ առաջ գլխակախ
 Կանգնած ելին մտազբաղ.
 Ու սրբազն աղոթքով
 Բարձրացը խնամքով,
 Խաս-խաս շորեր հազցը ին,
 Հազցը ին ու կապցը ին,
 Աղի արցունք մաղեցին,
 Նրան թաղել ուզեցին.
 Բայց մտքերը փոխեցին:
 Խորը քնի թեկ տակ,
 Ինչպես քնած հրեշտակ,
 Կույսը անուշ եր ննջում,
 Միայն, միայն չեր շնչում:
 Յեղբայրները յերեք որ
 Սուգ նստեցին-սղավոր.
 Բայց դշխունին նախ-նախշուն
 Խոպոպները աբրեշում,

Իր խոր քնից չըսթափվեց.
 Յերեք որը թամամվեց,
 Դրին դագաղ բլուրեղիա
 Ու կարդալով «տեր-ուղղիա»,
 Տարան նրան թափուր սար,
 Սարի տակին մի խոր այր.
 Շղթաներով կախեցին,
 Յոթը սլունից մեխեցին,
 Շուրջը ճաղեր տնկեցին,
 Քրոջ առաջ չոքեցին,
 Շունը դրին յերկրային.
 Խորհրդավոր եդ պահին
 Մհծը ասավ. — այ չքնաղ,
 Զահել մտար դու դադաղ.
 Զոհ գնացիր նախանձին,
 Գեղեցկությունդ առանձին,
 Յոթն ախպորով սիրեցինք.
 Բայց քեզ փեսիդ պահեցինք.
 Հիմի դու կաց այս վալրում,
 Մութ ու մթին այս ալրում:

 Յեկ թագուհին նախանձոտ
 Թե կլսի մահվան բոթ,
 Նորից առավ հայելին
 Իրա միակ սիրելին.
 Ասավ. — ասա, հայելի,
 Բոլորիցը ավելի
 Միթե լես չեմ սիրելի:
 Հայելին թե՝ հա ելի,
 Զըկա քեզնից ավելի
 Արմաղ-շարմաղ, սիրելի:

Նշանածին են փեսեն,
 Իշխանազուն Յեղիսեն,
 Վողջ աշխարհն ե ման գալիս,
 Ման ե գալիս ու լալիս.
 Պատահողին հարց տալիս.
 Ասէք, ուր ե դշխուհիս,
 Ասէք, ուր ե նշխուհիս:
 Ով լոռմ ե, զարմանում,
 Վորը հայտնի ծիծաղում,
 Վորը գլուխը կախում.
 Ու արևին լուս լերես
 Դիմեց փեսեն վերջապես:
 Արև, արև, արեգակ,
 Աշխարհն առած թերիդ տակ,
 Կլոր տարին շարունակ
 Ման ես գալիս լերկնքով.
 Բա չի ընկել քո աչքով
 Իմ դշխուհին նորահաս,
 Յես փեսեն եմ անմուրազ:
 — Վոչ, չեմ տեսել, պատանի,
 Ինձնից կարծիք մի տանի,
 Գուցե նա չի կենդանի,
 Գուցե մի տեղ լուսնակը
 Տեսել ե քո հոգլակը:
 Յեղիսեն իր հուշերով
 Դիմեց լուսնուն գիշերով.
 — Լուսին, լուսին, լուս լերես,
 Դու վոսկեզոծ լեղջուր ես.
 Աչըդ խաժուժ, լուսաեջ,
 Դու ծագում ես մթի մեջ,
 Քեզ աստղերը սիրելով
 Հա մնում են նայելով,

Միթե խնդիրս ես մերժում:
 Մի տեղ ես լեն աշխարհում
 Զես տեսել իմ դշխուհուն,
 Նա իմ հարսն ե, լես փեսա:
 Լուսին, լուսին, գեհ, ասա:
 Լուսինն ասավ. — Պատանի,
 Ինձնից կարծիք մի տանի,
 Գիշերները մութ-մթին.
 Յես ծագում եմ իմ հերթին.
 Յես չեմ տեսել դշխուհուն,
 Գնա, դիմիր դու քամուն.
 Գուցե նա քեզ ճար անի,
 Գնաս բարով, մի կանգնի:
 Քամուն դիմեց Յեղիսեն,
 — կանգնի, քամի, քեզ ասեմ,
 Քամի, քամի, կորովի.
 Հալածում ես խմբովի.
 Են լերկնքի ամպերը,
 Հուզում, դիզում ծովերը
 Ու քո անուշ հովերը
 Տարածում ես անսահման.
 Դու հզոր ես անպահման.
 Դու չես վախում վոչվոքից,
 Բացի, բացի են Մեկից:
 Միթե խնդիրս ես մերժում
 Մի տեղ ես լեն աշխարհում
 Զես տեսել իմ դշխուհուն,
 Նա իմ հարսն ե, լես փեսա:
 Քամին ասավ. — Յես տեսա.
 Գետից վերև կա մի սար,
 Են սարումը մի խոր ալր,
 Են ալրումը — խավարում,

Ժլուրեղ դագաղ որորվում.
 Շղթաներով ե կախած,
 Ցոթը սյունից ե մեխած:

 Քամին բացեց իր թեր.
 Տղան առավ սուզ-սկը.
 Լալով գնաց հեռացավ,
 Թափուր սարին մոտեցավ.
 Սարի շուրջը դատարկ վալր,
 Սարի տակը մի խոր ալր:
 Գնաց, գնաց մութ անցքով,
 Գնաց տխուր հալացքով.
 Գնաց գտավ մի դագաղ
 Շղթաներով վերից կախ
 Ցեվ դագաղում — հա անշունչ
 Իր դշխուհին վարդի փունջ.
 Վալր տալով իր գլխին,
 Վազեց կպավ դագաղին.
 Ցեվ դագաղը բլուրեղից
 Հա փշրվեց իր տեղից.
 Կուլսը զարթնեց զարմացած,
 Շուրջը նալեց ու ասաց.
 — Ա՛խ, եսքան ել մարդ քնի,
 Իր գլուխը վեր դնի...
 Վեր բարձրացավ դագաղից
 Ցեվ ինչ տեսավ ենտեղից.
 Վալ, լերազ ե, մուրազ ե,
 Ու լաց լեղան լերկուսով.
 Ալրից լելան ու լուսով
 Հեռու ծալրից աշխարհքի,
 Ուրախ, դվարթ, ձեռք-ձեռքի,
 Սարեր, ձորեր ըլջելով,



Անուշ, անուշ զրցելով,
ինչպես լերկու աղունիկ,
Յեկան հասան արքունիք.
Լուրջ հասավ աշխարհին—
Կենդանի լե դշխուհին:

Հենց են պահին թագուհին
Ելի առած հայելին,
Հետը անուշ խոսում եր,
Ծոմովելով ասում եր.
Ո՞վ կա ինձնից ավելի
Արմադ-շարմադ, սիրելի:
— Դու չքնաղ ես, խոսք չկա.
Խորթ աղջիկդ, են ինչ կա,
Նա լե քեզնից ավելի
Արմադ-շարմադ, սիրելի:

Նորից հուզվեց թագուհին,
Տվեց փշրեց հայելին.
Դոնից ուղիղ դուրս թռավ
Խորթ աղջկան պատահավ
Սիրտը ճաքեց ու մեռավ:
Հենց վոր նրան հողեցին,
Խորը, խորը թաղեցին,
Ըսկսեցին հարսանիք.
Յերկու ջահել ջան-ջանիկ
Պսակվեցին մուրազով.
Դեռ աշխարհը յերազով
Չեր տեսել եղպես խնջուկք.
Յես ել առս մեծ հաճուկք.
Ենքան դինի կոնծեցի,
Լոկ բեխերս թրջեցի:



NL0398296

476с 75ч.

568

А. С. ПУШКИН
СКАЗКА О МЕРТВОЙ ЦАРЕВНЕ И СЕМИ БОГАТЫРЯХ
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН

1864